պատմառ, որ մեր գրողը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գրականական «կամաւոր»... Մեր գրականական հասարակութիւնը, նմանութեան միջոցներ չէ ստանալով ընթերցողից և հետաքրքրել լինելով նրանց ձեռքով կարդալը, նուիրում են նորան իրանց միայն այն սակաւ ժամերը, որոնք մնում են ընդհանուր ծառայութիւններից և այլ պարապմունքներից։ Զարմանալի բան է, որ այս ծառայութիւնները և պարապմունքը գրողի սա ու մեր պէտք կարենան պահին նորան հետ այն անցից, որտեղ նորա գրիչը նոյն ինչ այդ ժամանակում անհանգիստ էր։ Հետազօտել մի առ մի այն նախորդ պայմանները, որոնց մէջ գտնվում է հայ գրողը, մեր նպատակը չէ։ Մենք ուզում էինք ասել միայն, որ այն սակաւաթիւ նամակները, որոնք թարգմանվելով ռուս լրագիրներում քիչ թէ շատ ծանօթացնում են մեզ Թիւրքիական հայերի կեանքի ու նրանց հետ, բաւականաչափ չեն հայոց խնդրի պրոպագանդա անելու համար, մանաւանդ երբ, ինչպէս փերեք տեսանք, սմանք յօդը չլինելու տեղ այրն էլ են հանում...

Աւելին ինչ պէտք անել այն հայ հասարակութիւնը, որի սրտի համար թանգ է հայոց խնդիրը,—այդ մենք ցոյց տալեցինք մեր անցեալ նամակում։

Գաւ. Նազարեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

փետրվարի 18

Ինչպէս Թիֆլիսում քաղաքային դումայի կանոնադրոյն հայերը գրադարձել է Թիֆլիսի սահրանք հասարակութեանը, մեր Ախալքալաքում էլ սարդէ հասարակութիւնը գրավված է անցեալ տարվայ գեղարուեստական հաշիւներով։

Հասարակական առածը ասում է «Ձոռքինն ոռ ոռքին գործին»։ Անցեալ տարի քաղաքային արկղը բաւականին փարկ սոսցաւ։ Այ և նոր մեծ գումարներ էր դուրս գալի արկղից.—I. Այն է 720 րուբլի քաղաքի գեանտուրնիկներին (մինչև 1880 թիւը քաղաքային արկղը վճարում էր 100 ր. իսկ մնացեալը Գոսոսական փարչութիւնը)։

II. Քաղաքային այգին շինելու համար մինչև 2000 րուբլի։

III. Քաղաքային բոլոր փողոցները մաքրելու համար 403 րուբլի։

IV. 700 րուբլի քաղաքիս մի քանի գլխաւոր փողոցները խճուղի շինելու համար։

Բացի այս մի քանի գումարները, որոնք հասարակական վճռով որոշել էր քաղաքը արկղից դուրս հանելու, քաղաքիս գլխաւորը պ. Ց. Ղազանճեանցը առանց հասարակութեան խորհրդի և համաձայնութեան 500 րուբլի արկղից մսխում է, ինչպէս յայտնեցաւ, իր հաշիւները ներկայացուցանելիս գեանտուրնիկներին յանձնելու միջոցին։ Այս 500 րուբլուց 200-ը մի տեղի պատճառաւ մսխել է, իսկ մնացեալ 300-ը անյայտ ծախսեր է արել. բացի այս քաղաքի մաքրութեան 403 րուբլին որտեղ է մնացել, ինչ է եղել, ոչինչ յայտնի չէ, իսկ քաղաքը ոչ մի անգամ մաքրված չէ եղել։

Խճուղու 700 րուբլուց շինված է մեր քաղաքի մէջն տարածութեամբ տեղ միայն գաւառապետի դրան առաջ, դա էլ ոչ թէ խճուղի է նման, այլ միայն հող և աւազ լցրած. պ. Ղազանճեանի ասելով դա միայն 50 րուբլիով կարելի էր շինել, բայց գաւառապետի հրամանով վճարված է 480 րուբլի և ում է վճարված այս փողը, սա էլ գաղտնիք է։

Գ. պ. հաշուատեսները երբ մի առ մի քննում էին հաշիւները, նախկին գլխաւորը պ. Ղազանճեանը զարհուրած ասում է.—Պարոններ, ինչ էք անում, միթէ կարելի է հաշւիս մանրամասն նայել, դուք նայեցէք միայն գումարներին և ստորագրեցէք։

Հաշուատեսներից մի քանիսը, նրա բարեկամներ, անտեսելով շատ գեղծումները և անհաշիւ ծախսերը պ. Ղազանճեանի կողմից, սկսում են պաշտպանել նորան, ինչպէս արել են Թիֆլիսի գաւառի ձայնաւորները։ Բայց մի երկուսը պահանջում են մանրամասն հաշիւ։ Մենք մնացեալ ենք այս վերջինների մեծահոգութեան վրա, որ որանք կը պաշտպանեն հասարակութեան շահերը և թոյլ չեն տայ անտեղ քաղաքի փողերը վատնելու մի քանի չարաշահներին։

Հարկը պահանջած ժամանակ կը գրենք մանրամասն այս հաշիւների վրա։

Տեղացի

ՆԱՄԱԿ ՏԱՐՕՆԻՑ

փետրվարի 17-ին

Շատ անգամ Բաղէշի մէջ յարուցվել է հայոց փոստչինի ապահովութեան մէկ այնպիսի ծանրակշռութիւն սաւ, որ յանկարծակի և առանց յայտնի պատճառների չէնթարկվի մեծ վնասների։ Այդ հարցին համակրութեամբ շատ անգամ վերաբերվել է «Մշակը»—իր բնակի յօդուածներով, բայց միշտ լռել է պատասխան թէ այդպիսի նկարին կաղապարութիւններ կայմեր անհնար է. մի և նոյն կրկնվում էր և Ցարիցինի մէջ։ Բայց այս անգամ, ընդհակառակը, այդ նպատակով ժողովված փոստչինի վաճառականները Ցարիցինի մէջ առաջին իսկ նիստում համաձայնվեցան և հաստատ հիմունքների վրա կազմեցին համաձայնութեան թուղթ և ստորագրելով անմիջապէս գործի սկսեցին և շատ աջողակ վերջ տալին։ Այդ գործին որպէս պարագլուխ և որպէս առաջնորդող էր պ. Դրոբերեանը, որին մեր շնորհակալութիւնը հրապարակապէս յայտնելու պատիւն ունինք։ Ահա մէկ օրինակ, որից թող քաղաքացիները օգուտ քաղեն և իրանց մէջ նմանապէս կազմեն մէկ այդպիսի կազակցութիւն և ի զուր վնասներ չը կրեն, որոնցից շատ գիւղերին կերպով կարող են գերծ մնալ, մանաւանդ որ այդ ընկերութիւնը, որպէս մէկ անձն, կարող է պաշտպանութիւն չափել ընկերութիւններին հետ։

Այդ ընկերութիւնը իր վերջին նիստում անսոյ 16-ին իր գործերը փակելով աւելացած 401 րուբլի դրամը որոշեց բաժանելու երեք բարեգործական նպատակի։ 133 րուբլի ռուսաց, 133 րուբլի հրէից և 135 րուբլի հայոց։ Հայերը վճռեցին 100 րուբլի ուղարկել Խնդրադատուանց պ. Նազարեանցի յայտնած համակրելի առաջարկութեամբ աւելացնելու,—և. Ռոյսի և Լօնդոնի մէջ թզթակիցներ ունենալու համար, իսկ 35 րուբլին մնում է պ. Արամեանցի մօտ, առայժմ գեռ չորոշելով տարագրութեան մէջ։ Այդ ընկերութեան անդամակցողներից երկուսը իրանց մօտ մնացած և ընկերութեամբ հատուցելիք դրամները ցանկացան իրանց կամեցողութեամբ նուիրել։ Ընկերութիւնը ընդունեց նոցա առաջարկութիւնը և առա պ. Տէր-Միքայէլեանց 22 ր. 50 կ. և պ. Բանեաթեանց 47 ր. 50 կ. նուիրում են Վանի սովելոց։

Խմբագրութիւն, սոյն նամակը ծոցում ուղարկում եմ մի հատ րանչի փոխադրական սումսակ, որով պէտք է ստանալ 170 րուբլի և խնդրեմ գործ դնել բաւ պաշտօնէին և սոյն նամակը բարեհաճեք տպելու ձեր համակրելի թերթի մէջ։

Ա. Զախմախչեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գ. Գաչինա խնդրում է մեզ յայտնել որ այսօր, չորեքշ. փետրվարի 28-ին, երեկոյեան ժամը 8-ին ԹԻՖԼԻՍԻ Արտիստական կարդալու է առաւօտեան լեզուով մի դասախօսութիւն Ախալ-Տէկէի և Տաւրիստանի մասին։ Արդիւնքի մի մասը բարեգործական է։

—

Մեզ խնդրում են յայտնել որ պ. Արշակ Մելիք-Ախրօղեանը նորերումս բաց է արել Հաւլաբարում մի ընթերցարան։

—

Մեզ հաղորդում են, որ Հաւլաբարի խոչխանը սուսանված ընդարձակ գերեզմանատունը անուշ դրութեան մէջ է։ Նրա քանդված պարիսպների միջից մտնում են ամեն տեսակ կենդանիներ, նոյնպէս և ամեն տեսակ գողեր ու աւազակներ, որոնք քանդում, հանում են մահարձանների քարերը և փոխելիքները։ Փողոցները մի առանձին հանելութեամբ լցնում է այդ գերեզմանատան թարեկաւոր վիճակը հանդուցեալ Ներսէսի ժամանակ։ Այժմ այդ գերեզմանատանից ոչ հեռու փորվում է ապագայ Բաքու-Թիֆլիսեան երկաթուղու համար գիծը, և եթէ փորված հողը ամեն պարիսպի չուրջը, դրանից կը գոյանայ զարհուրելի թումբի նման մի բարձրանք, սա էլ հողէ պարիսպ, որ առ ժամանակ կարող է փոխարինել քարէ պարիսպը։ Մեռելոցների ժամանակ անպայման ժողովվում են փողերը գերեզմանատուն դրան մօտերքի առջև, երբ թէ պարիսպ շինելու համար, բայց այդ պարիսպը երբեք չէ շինվում։ Դարձնում ենք առաջնորդարանի և կոնսիստորիայի ուշադրութիւնը այդ բոլոր անկարգութիւնների վրա։ Ցաւալի է որ մեր հոգևոր վարչութիւնը այդ առաջնածն անտեղ է և իր սրբազան պարտաւորութիւնները աւելորդ է համարում կատարելու։ Մենք, աշխարհականներս, անպայման պէտք է յիշեցնենք մեր հոգևորականներին նրանց պարտաւորութիւնները։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Բագրատունեանից նրա ռուսերէն բրոշիւրը «Межеванie въ связи съ поземельнымъ вопросомъ» վերնագրով։ Պարոն Բագրատունեան եղել է առաջ «Тифл. Объявленія» լրագրի խմբագիր։ Բրոշիւրը հրատարակված է Թիֆլիսում, Ց. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թւին։ Գրքոյկի գինը 50 կոպեկ է։

—

Այս օրերս հրատարակվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ մի նոր վրացերէն ամսագրի առաջին համարը։ Ամսագրի վերնագիրն է «Իմէդի», որ վրացերէն լեզուով նշանակում է «Յոյս»։

—

Վրաց «Դրօէբա» լրագիրը հաղորդում է որ իշխան Իվան Մուխրանսկի նուիրեց 500 րուբլ յօգուտ գրագիտութեան տարածման վրաց ընկերութեան և 500 րուբլ յօգուտ ազնուական դպրոցի։ Իսկ նրա որդին, իշխան Կոնստանտին Մուխրանսկի նուիրեց 1000 րուբլ յօգուտ վերոյիշեալ ընկերութեան։

—

«Голосъ» լրագիրը լսել է որ շուտով հրատարակվելու է Բարձրագոյն հրաման, որով Կովկասեան ուսումնարանական շրջանի դպրոցներին կը յատկացվին նոյն արտօնութիւնները, որոնք տրված են նոյնանման դպրոցներին Եւրոպական Ռուսաստանում ընդհանուր զինուորագրութեան պարտաւորութիւնները կատարելու վերաբերութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Տրանսվալի մէջ պատերազմող անգլիական զօրքերը նորից յաղթվեցան բուրերից։ Զօրքերից շատ քչերը ազատվեցան և նոյն իսկ հրամանատար գեներալ Կոլլէյ սպանվեցաւ այդ կռւի ժամանակ։ Այժմ անհերքելի է դարձել, որ չափազանց դժուար է ճնշել Տրանսվալի բուրերի ապստամբութիւնը և այդ դժուարութիւնները յաղթելու համար անգլիական կառավարութեանը միայն մի ճանապարհ է մնացել՝ ճանաչել Տրանսվալի անկախութիւնը։ Այս դէպքում ազգային ինքնասիրութիւնը պէտք է մի կողմ թողնել, որովհետև այժմ շատ դժուար է նրան բաւականութիւն տալ և մի և նոյն ժամանակ այդ գործը պատերազմական մեծ ծախսերի հետ է կապված։ Գաղթականական կառավարութիւնը անհրաժեշտ օգուտ կը քաղի այդ դէպքից և կը մեղադրի կառավարութեանը, որ նա բրիտանական ազգի արժանաւորութիւնը չէ պաշտպանում հարաւային Աֆրիկայի մէջ։ Գաղթականականները հազիւ թէ ուշադրութիւն դարձնեն այն հանգամանքի վրա, որ այժմեան դժուարութիւնների պատճառը լորդ Բեկոնսֆիլդի քաղաքականութիւնն է։

Իսկապէս Գլադստոն կարող է լուծել ընդդիմադրական կուսակցութեանը։ Եթէ նա Տրանսվալի հարցը լուծէ համաձայնութեան ժողովի քննութեամբ և յայտնէ, որ ինքն այդ գործի մէջ կը կատարէ միայն ժողովի հրահանգները և կարգադրութիւնները, նա այլ ևս պատասխանատու չէ լինի։ Համայնքների ժողովը երեւի կը համաձայնի, որ այժմեան հանգամանքները անհրաժեշտ են դարձնում Տրանսվալի անկախութիւնը և դրա պատասխանատուութիւնը իր վրա կառնի։ Բացի այդ ժողովը կը քննէ Բեկոնսֆիլդի քաղաքականութիւնը անգլիական գաղթականութիւնների վերաբերութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզից լրագիրներին գրում են, որ փետրվարի 27-ին, Լուի Բլանի նախագահութեամբ, կայացաւ հանդիսաւոր կերպով գրականական և հրաժեշտական երեկոյ ի պատիւ Վիկտոր Հիւգոյի։

—Լրագիրներին գրում են Հռոմից։ Ասում են և շատերը պնդում են, որ Ռումինիան թագաւորութիւն կը վերափոխվի։ Այս բանի համար նշանակված է մարտի 22-ը, իշխանութեան անկախութեան հրատարակելու տարեդարձ։ Ռումինական «Romanul» լրագիրը պատասխանում է, որ դրան եւրոպական պետութիւնները չեն ընդդիմանայի, այն ինչ երկիրը թագաւորութեան անունը սեփականացնելով, մեծ նշանակութիւն կը ստանայ իր միջնադարեան դերը բարձրացնելու համար։

—Բ. Դուռը Կ. Պօլսում սկսեց հալածել հայերին։ Նրանց արգելված է հայոց պատմութիւնը և աշխարհագրութիւնը ուսումնարանել։ Այդ առարկաների վերաբերութեամբ խօսող բոլոր հեղինակութիւնները արգելվում են։ Ոստիկանութիւնը պսակների վրա ևս արգելք դրեց, որոնց արկղերի վրա նկարված են հայոց հին թագաւորներից մէկը և Հայաստանի զինանշանը, որը տրտմութիւններ է թափում աւերակների վրա։ Բացի դրանից հայերին արգելում են իրանց եկեղեցիների զանգակները զարկել, ի բաց առնելով միայն, երբ հարկաւոր է հրդեհի մասին նշան տալ։ Արգելվում է նոյնպէս յօգուտ բարեգործական հիմնարկութիւնների վիճակախաղեր կազմել առանց Բ. Դռնից նախապէս թոյլտուութիւն ստանալու։ Վերջապէս, չը նայելով լրագիրների հերքումներին, լուրեր են տարածված սրբազան Ներսէս պատրիարքի շուտով աքսորելու մասին։ Մի խօսքով, այժմ թիւրքերը կամ Բ. Դուռը նոյնքան դրգռված են հայերի դէմ, որքան յոյների դէմ։ Կարողութիւն չունենալով հալածել յոյներին, Բ. Դուռը հալածում է հայերին, որովհետև նրանք ոչ մի գնահատութեան հովանաւորութիւնը չեն վայելում։ Այս պատճառով աւելորդ է խօսել այն բանի մասին, վերջացնում է «Новое Время» լրագրի թղթակիցը, որ հայերը պատրաստվում են ցանկանում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 26 փետրվարի։ Կ. Պօլսից հաղորդում են, որ դեսպանները միահամեն ընդունեցին Գօշէնի և Հացֆէլդի կարծիքը, որով նրանք պէտք է բաւականանան թիւրքիայի առաջարկութիւնների ընդունելով, առանց այդ առաջարկութիւնները քննադատութեամբ ենթարկելու և իրանց կողմից պէտք է հասցնեն այդ առաջարկութիւնները իրանց կառավարութիւններին։

Կ. ՊՕԼԻՍ. 25 փետրվարի։ Բ. Դուռը հրամայել է զօրքերի կրկնակի կարգով շրջափակել այն տուները, որոնց յայտնվել է ժանտախտը և այրել ժանտախտով վարակված բոլոր քաղաքները և գիւղերը։

ԴՈՒԲԼԻՆ. 25 փետրվարի։ Արդէն կալանաւորված են 18 մարդիկ. կալանաւորվածներից մէկը, Բոյտոն, կալուածական լիգայի գլխաւոր կազմակերպող է համարվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 25 փետրվարի։ Թաթայեան կալուածական բանկի գրաւական թերթերի կուրսը 90 ր. 25 կ. է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ